

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Համաշխարհայնացման ժամանակակից գործընթացները նոր մարտահրավերներ են պարունակում տարբեր հասարակությունների և մշակույթների համար, որովհետև առնչվում են յուրաքանչյուր մարդու առօրյային, փոխում կյանքի՝ դարերով հաստատված կարգը: Երբ կյանքի պայմանները փոխվում են շատ դանդաղ, տասնյակ սերունդների կյանքի ընթացքում, մշակույթը, որը ձևավորվել և գործառում է որպես առաջին հերթին արգելանքների համակարգ, կարողանում է նույն կերպ վերարտադրվելու միջոցով կազմակերպել յուրաքանչյուր հաջորդ սերնդի կյանքը անցյալից ժառանգվող վարքի նորմերի, արժեքների և իդեալների միջոցով, որոնք կարող են էապես չփոխվել, որովհետև էապես չի փոխվում սոցիալական միջավայրը: Սակայն ժամանակակից աշխարհում, երբ արմատական փոփոխություններ են տեղի ունենում արդեն մեկ սերնդի կյանքի ընթացքում, ակնհայտ է, որ պարզ վերարտադրությունն այլևս չի կարող մշակույթին հաղորդել կենսունակություն և շարունակականություն: Հողվածում ցույց է տրվում, որ հարուստ և կենսունակ է առաջին հերթին այն մշակույթը, որն ունի փոխվող իրականությանը հարմարվելու և կյանքի կազմակերպման այլընտրանքային ձևեր առաջարկելու ներուժ: Այլընտրանքային են այս դեպքում բոլոր այն եղանակները, որոնք թույլ են տալիս մարդկանց խմբերին (ազգերին, էթնոսներին), մշակութային ինքնության պահպանմանը զուգահեռ, ինքնադրսևորվել և հաստատվել փոփոխվող իրականության մեջ: Պատմության ընթացքում նման փորձ ձեռք է բերել նաև հայ ժողովուրդը, որը, աշխարհագրական տրոհվածության պայմաններում և միասնական ազգային պետության մեջ համախմբվելու հնարավորությունից զրկված, ստեղծել և իրացրել է համայնքային ինքնավարության, հարմարվողականության և պետականության ընդօրինակման մշակութային նախագծեր: Դրանք հիմնականում լուծել են ոչ թե զարգացման, այլ զոյատևման խնդիր, բայց մարդկանց հաղորդել են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, ճկունությունը, «մենք»-ին (ընտանիքին, համայնքին) պատկանելու արժևորումն ու դրանից բխող բարոյականությունը և այլն: Հայ մշակույթի այդ հարուստ փորձն է հիմք դարձել նաև այն իրողության, որ մեր դեպքում ազգային պետությունը նույնպես մշակույթի ծնունդ է ի տարբերություն արևմտյան շատ երկրների, որոնցում ազգ-պետությունն է նպատակադրված ստեղծում և տարածում ազգային մշակույթ՝ ընդհանուր լեզու, վարքի նորմեր, նարատիվներ, արժեքներ և այլն:

Բանալի բառեր – *համայնք, մշակութային ինքնավարություն, հարմարվողականություն, գոյատևում, մշակութային հարկադրանք, արգելանք, քաղաքական չեզոքություն, անկախություն*

**Մշակույթները օրգանիզմներ են:
Մշակույթի պատմությունն իր կենսագրությունն է:
Օ. Շպենգլեր**

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի հոգևոր մի շարք հատկանիշներ, որոնք նրան դարձնում են ինքնատիպ, մյուսներից տարբերվող ու եզակի: Այդ հատկանիշները կախված են ինչպես բնական-աշխարհագրական, այնպես էլ սոցիալական պայմաններից, որոնցում տեղի է ունեցել և շարունակում է ընթանալ տվյալ էթնոսի ձևավորումը: Ասվածից բխում է, որ «ազգի հիմքը կազմող էթնոսը ոչ միայն բնական, այլև սոցիոմշակութային ընդհանրություն է»¹, և որ տվյալ ժողովրդի մշակութային առանձնահատկություններն ուսումնասիրելու համար հարկ է հետևել դրա պատմական ընթացքին, մարտահրավերներին արձագանքելու ձևերին, համակեցության ապահովման համար կիրառվող մեթոդներին ու մեխանիզմներին:

Բանն այն է, որ համատեղ կյանքը փոխում է մարդկանց նախասիրությունները, առաջնահերթությունները: Եթե անհատի մակարդակում առաջնահերթ նշանակություն կարող է ունենալ հաճույքը կամ ցանկությունների այսրոպեական իրականացումը, ապա կոլեկտիվ (համայնքային) կյանքը թելադրում է իր առաջնահերթությունները, որոնցից են ընդհանուր անվտանգությունը, գոյատևման համար անհրաժեշտ միջոցների հայթայթումը, աշխատանքի բաժանումը, դերերի բաշխումը և այլն: Արիստոտելյան հայտնի բնութագրությունը՝ մարդը հասարակական կենդանի է, նշանակում է, որ մարդ միայնակ չի կարող լուծել իր առջև կանգնած խնդիրները և իր իսկ անվտանգությունն ու գոյատևումն ապահովելու համար ստիպված է միանալ այլ մարդկանց, ստեղծել մեծ ու փոքր խմբեր, մշակել համակեցության կանոններ ու ենթարկվել դրանց: Հետևաբար, հանուն ընդհանուր նպատակների ու շահերի անհատը պետք է արգելեր ինքն իրեն և մյուսներին առաջնորդվել անհատական ցանկություններով: Թերևս այս կապակցությամբ է Չ. Ֆրեյդը նշում, որ արգելանքը (տաբուն^{*}) մշակույթի առաջին ձևն է: Ըստ նրա՝ արգելանքը գիտակցվում է, մինչդեռ հաճույք ստանալու ձգտումն անգիտակցական է: «Մարդիկ ցանկանում են խախտել տաբուները, բայց վախենում են, և այդ վախն ավելի ուժեղ է,

¹ **Է. Ա. Հարությունյան**, Ոգու և հոգու սահմանագծում // «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» հոդվածների ժողովածու, Եր., 2009, պրակ 6, էջ 3:

^{*} Տաբու բառն ունի տարբեր իմաստեր և նշանակում է սուրբ, արգելված, սարսափելի:

քան հաճույք ստանալու ցանկությունը»²: Արգելանքն առհասարակ սոցիալական վարքի կարգավորման ամենահին նորմն է: Այն ավելի հին է, քան մարդու վարքը կարգավորող այնպիսի նորմերը, ինչպիսիք են կրոնը, բարոյականությունը, իրավունքը և օրենքը: Ուստի, եթե մշակույթն առաջացել է արգելանքներից և ինքն իրենով արգելանքների համակարգ է, կարելի է եզրակացնել, որ մշակույթը հարկադրանք է մարդու, նրա ազատ կամքի, խոսքի և վարքի նկատմամբ: Բայց այնպիսի հարկադրանք, որն ընդունելի էր մարդու համար գլխավորապես այն պատճառով, որ դրան ենթարկվելը ենթադրում էր պաշտպանվածություն համայնքի ուժերով դեռևս օտար բնությունից և այլ վտանգներից:

Հետևաբար, որքան ուժեղ է մշակութային հարկադրանքը, և որքան խիստ են ընդունված կարգ ու կանոնին հետևելու պահանջները, այնքան կայուն է մշակութային համակարգը: Դա իրոք այդպես է, և եթե նույն միտքն արտահայտենք սիներգետիկայի տերմինաբանությամբ, ապա կստացվի, որ սոցիոմշակութային համակարգի խնդիրն է ապահովել սեփական կենսունակությունը, կայունությունը՝ ընդունված նորմերի պահպանման միջոցով, իսկ դրանցից շեղվող վարքի դրսևորումները կդիտարկվեն որպես էնտրոպիա՝ քաոսի, ապակայունացման չափը մեծացնող երևույթ: Այս իմաստով բնական է, որ համակեցության պահպանմանն ուղղված նորմերը պարտադրվում են որպես «կատեգորիկ իմպերատիվներ»:

Մշակույթն այս իմաստով կյանքի կազմակերպման ձևն է, ինչպես նաև դրա վերարտադրման միջոցների (դաստիարակություն, կրթություն, քարոզչություն և այլն) և արժևորման սկզբունքների ամբողջությունը: Այս տեսանկյունից մշակույթը կարող է մեկնաբանվել որպես սոցիալական ինստիտուտ, որը պահպանում, վերարտադրում և արժևորում է կյանքի՝ պատմականորեն ձևավորված տվյալ կարգը: Այսինքն՝ մշակույթը սոցիալական կյանքում իրականացնում է մարդու վերկենսաբանական գործունեության ձևերի ստեղծման և փոխանցման գործառույթները³: Պատկերավոր ասած՝ մշակույթը **կյանքի ծրագիր է**, որն ամփոփ ներկայացնում է պատմականորեն կուտակվող սոցիալական (հասարակական, համայնքային) կյանքի փորձը: Այստեղ ամենաեականը, թերևս, այն է, որ մշակույթը զգալի ազդեցություն ունի սոցիալական մյուս ինստիտուտների գործունեության վրա, որովհետև արձանագրում, պահպանում և փոխանցում է սոցիալական փորձը հատուկ նշանային համակարգերի միջոցով (լեզու, վարքի նորմեր, խորհրդանիշներ և այլ), որոնք ստեղծում են այն ընդհանուր սեմիոտիկ դաշտը, որում տեղի են ունենում մարդու և սոցիալական ինստիտուտների փոխհարաբերությունները: Հենց այդ նշանային համակարգերի վերար-

² Фрейд З. «Я» и «Оно». Труды разных лет. Т. 1, Тбилиси, 1991, с. 226.

³ Ст и Степин В. С. Цивилизация и культура. СПб., СПбГУП, 2011:

տաղրությունն էլ ենթադրում է մշակույթի՝ կյանքի ծրագրի վերարտադրություն: Եվ մշակույթը կարող է դա անել այնքան ժամանակ, քանի դեռ ներկան, պատկերավոր ասած, էականորեն չի տարբերվում անցյալից:

Բայց, ինչպես գրեթե ամեն ինչում, այս հարցում նույնպես որոշիչ է չափը: Որքան էլ մարդկանց համար մեծ նշանակություն ունենա իրենց մշակույթի կայունությունը, դրան գուցահեռ պետք է կարևորվի նաև այն հանգամանքը, որ մշակույթի կենսունակությունը կախված է ոչ միայն վերարտադրման մեխանիզմներից, այլև արագ փոխվող իրականությանը հարմարվելու ունակությունից: Եվ իրոք, դարերի ընթացքում տվյալ ժողովրդի մշակույթը կարող է ձեռք բերել կարծրության աստիճանի կայունություն, դոգմատիկություն և կորցնի իրականության բազմապիսի և տարատեսակ մարտահրավերներին համարժեք, այսինքն՝ նույնքան բազմապիսի կերպով արձագանքելու ունակությունը:

Ուստի, հարուստ և կենսունակ է առաջին հերթին այն մշակույթը, որը ճկուն է, ունի արագ և կտրուկ փոխվող սոցիալական միջավայրին հարմարվելու ներուժ՝ միննույն ժամանակ պահպանելով էական այն հատկանիշները՝ լեզուն, պատմական հիշողությունը, նարատիվները և այլն, որոնք թույլ են տալիս վերարտադրել մշակութային ինքնությունը:

Թերևս այստեղ պետք է փնտրել հնագույն ժամանակների մեծ ու հարուստ մշակույթների անկման պատճառներից մեկը. ոչ թե վերացել են տվյալ մշակույթի (լեզվի, սովորույթների, իռացիոնալ հավատալիքների, արարողակարգերի և այլնի) կրողները, այլ նրանք, ժամանակի փոփոխությունների ոգուն համահունչ, չեն կարողացել ստեղծել կամ պահպանել մշակույթի վերարտադրության համար անհրաժեշտ պայմաններ և միջավայր: Որքան էլ մշակույթը հարուստ և զարգացած լինի, միայն ավանդույթի ուժը, հավատարմությունը սովորույթներին և անցյալի արժևորման այլ ձևերը բավարար չեն ապահովելու մշակույթի և այն կրողների ինքնության վերարտադրությունը, քանի որ «անցել են բարի ու հին այն ժամանակները, երբ արգելանքների (տաբուների) ու սովորույթների ազգային հաստատությունները կարող էին ապահովել ներազգային հորիզոնական կապերի մշտականությունը, ազգային նույնականության շարունակականությունը և հետևաբար՝ ազգի սոցիոմշակութային անվտանգությունը»⁴: Հետևաբար, մշակույթն առաջին հերթին «այլընտրանքային իրավիճակներում ընտրություն կատարելու, ազգի մտավոր և բարոյական որակները քաղաքականապես կազմակերպելու, կյանքը կանոնակարգելու և համակեցություն ձևավորելու, պահպանելու միջոց և մեխանիզմ է»⁵:

Ասվածից բխում է, որ մշակույթը մեկընդմիջ տրված համակարգ

⁴ Էդ. Ա. Հարությունյան, Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը // Բանբեր Երևանի համալսարանի, 1 (115), 2005, էջ 4:

⁵ Նույն տեղում:

չէ և ենթակա է փոփոխության՝ կախված պատմական ու սոցիալական պայմաններից, միջավայրին հարմարվելու անհրաժեշտությունից, նպատակներից և այլն: Ճգնաժամային, շրջադարձային և արմատական փոփոխություններ ենթադրող այլ իրավիճակներում կյանքի այլընտրանքային ծրագրեր առաջարկելու ներուժը խոսում է մշակույթի ճկունության, արդյունավետության և կենսունակության մասին: Այսինքն, երբ սոցիալական միջավայրը փոխվում է, իսկ մշակույթը կարողանում է առաջարկել մարդկանց տվյալ խմբի (էթնոսի, համայնքի) կյանքի կազմակերպման այլընտրանքային ձևեր, դրանք մի կողմից պահպանում են մշակույթի վերարտադրման հնարավորությունները, իսկ մյուս կողմից թույլ են տալիս մարդկանց ներգրավվել նոր սոցիալական պայմաններում և շարունակել իրենց բնականոն կյանքը: «Առհասարակ մշակութաբանական առումով զարգացած ազգային մշակույթ պատմականորեն նշանակում է յուրաքանչյուր դարաշրջանում **սեփական ներքին կարողությունների առկայություն**, որոնք կարող են ծավալվել այդ դարաշրջանի քաղաքակրթության **մշակութային ամբողջ տարածության մեջ**»⁶: Նշված օրինաչափությունը բազմիցս դրսևորվել է հայկական մշակույթի պատմական զարգացման ընթացքում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ, հայտնի է, որ հայկական մշակույթի ձևավորումը պատմության ընթացքում միշտ չէ, որ ընթացել է ազգային պետության պայմաններում, ինչն իր հետքն է թողել ինչպես անհատի, այնպես էլ ժողովրդի կյանքի կազմակերպման առանձնահատկությունների վրա: Ազգային պետության բացակայությունն այս դեպքում նշանակում է, որ միշտ չէ, որ եղել են պայմաններ և միջավայր միասնական ազգային լեզվի ու մշակույթի համար⁷: Լեզվի մակարդակում, օրինակ, այդ երևույթն արտահայտվել է մի քանի տասնյակ բարբառների ձևավորման տեսքով: Կյանքի կազմակերպման մշակույթի առումով կարելի է արձանագրել երկու իրողություն: Նախ, հայ ժողովուրդը պատմության ընթացքում ապրել է հիմնականում ոչ թե մեկ տարածքում՝ որպես մշակութային և քաղաքական ընդհանրություն, այլ տարբեր բնակավայրերում՝ առանձին համայնքներով: Ազգային հայկական միասնական պետության բացակայությունը, մշակութային օտար միջավայրում գոյատևելու խնդիրը ստիպել են հայերին իրենց կյանքը կազմակերպել համայնքների տեսքով, իսկ այդ ապրելակերպը ժամանակի ընթացքում դարձել է նաև գիտակցության, ինքնագիտակցության և ազգային ինքնության կարևոր հատկանիշներից մեկը: Համակեցության այս **տրոհվածությունը** դարձրել է մշակույթը (ինքնությունը) **հատվածական**, ինչը կարելի է մեկնաբանել երկու իմաս-

⁶ **Հ. Ա. Գևորգյան**, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 26:

⁷ Տե՛ս **Հ. Ա. Գևորգյան**, Ազգ. ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997, էջ 20-21:

տով: Մի կողմից՝ մշակութային հաստիքային ընդհանրության նշանակում է ընդհանրության որոշակի բացակայություն, բայց նաև ենթադրում է մշակութային խճանկարի առկայություն, հետևաբար՝ բազմազանություն: Մյուս կողմից՝ «ծագումնաբանական ընդհանրություններ ունեցող, բայց պետության ազգային ձևի մեջ ինչ-ինչ պատճառներով չհամախմբված մարդիկ կյանքը կազմակերպելու և կանոնակարգելու նպատակով ստիպված ապավինում են սովորությունների, ազգակցական կապերի և համակեցության ընդհանրական մշակույթի կարգավորիչ գործառույթներին: Այդ կերպ ձևավորված նույնականությունը չունի տնտեսական, քաղաքական ու իրավական միասնության ինստիտուցիոնալ կառույց և հենց այդ պատճառով էլ **հաստիքային է**»⁸:

Երկրորդ իրողությունն այն է, որ այդ տրոհվածության պայմաններում էլ հայ ազգային մշակույթի պատմական զարգացումը չի ընդհատվել: «Հայ մշակույթը դար առ դար ծավալել է իր ներքին կարողությունները և հասարակական կյանքի կազմակերպման համազգային ձևերը քաղաքակրթության տարբեր դարաշրջաններում՝ հավաստելով իր կրող ժողովրդի անընդմեջ պատմական գոյությունը իր հայրենիքում: Սա (պատմության տեսության տերմինաբանությամբ) հայ ժողովրդի պատմության և մշակույթի **դիախորնիկ** ամբողջականությունն է»⁹: Այդպես է, որովհետև հայոց պատմության ընթացքում պետության երկարատև բացակայության պայմաններում ազգակազմիչ և ազգապահպան գլխավոր գործոններ են դարձել ոչ թե օրենքը և իրավունքը, քաղաքականությունը և գաղափարախոսությունը, այլ մշակութային այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ավանդույթը, պատմական հիշողությունը, հավատարմությունը անցյալին, նախորդ սերունդների կյանքի փորձի վերարտադրությունը, ազգային նարատիվները և այլն: Այս օրինակաբանությունն արտահայտվել է նաև ազգ – պետություն հարաբերությունների համակարգում. եթե արևմտյան շատ ազգերի ձևավորումն ընթացել է վերնից ներքև (պետությունից հասարակություն), ապա հայերի պարագայում տեղի է ունեցել հակառակ գործընթացը: «Հայ ժողովրդի սոցիոմշակութային և քաղաքական արդիականացումը (մոդերնիզացիան), հետևաբար նաև հայ ազգի կազմավորումը ընթացել է «ներքևից վերև»: Այսինքն՝ ոչ թե նախապես ձևավորվել է տարածքային սկզբունքով գործող ինչ-որ պետություն, որն էլ, իր հերթին, աստիճանաբար իրեն ենթարկելով այդ տարածքում ապրող հպատակներին, նրանց միջև ձևավորել է պետաիրավական հարաբերություններ և ներպետական մշակութային համասեռություն՝ դրանով իսկ նպաստելով հայ ազգի կազմավորմանը: Ճիշտ հակառակը: Նախապես որոշակի տարածք (Հայկական լեռնաշխարհը) ենթարկելով էթնոմշակութային

⁸ **Էդ. Ա. Հարությունյան**, Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը, էջ 8:

⁹ **Հ. Ա. Վերդյան**, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, էջ 380:

յուրացման, ստեղծելով մշակութային ինքնություն և համակեցության հորիզոնական-ազգային կապեր՝ արդեն ձևավորված հայ ազգը կազմավորել է նաև իր ազգային պետությունը»¹⁰:

Հետևաբար, եթե հաշվի առնենք հայ ժողովրդի պատմության երկարատև հատվածում տեղ գտած այս առանձնահատկությունները՝ կյանքի կազմակերպման նախաքաղաքական (էթնիկական) ձևերի գերակայությունը և էթնոսի աշխարհագրական տրոհվածությունը, կարող ենք եզրակացնել, որ հայերի էթնոկեցության բնորոշ գլխավոր հատկանիշներից մեկը **համայնքային** կյանքն է: Եվ իրոք, ազգային պետությունից զուրկ կամ դուրս՝ օտար մշակույթներում ապրող ժողովրդի կյանքի կազմակերպման թերևս ամենաօպտիմալ ձևը համայնքն է: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, համայնքային կյանքն է, որ ենթադրում է կառավարում սեփական ուժերով՝ առանց քաղաքական և իրավական ինստիտուտների, երկրորդ՝ համայնքն ապահովում է պայմաններ և միջավայր սեփական մշակույթի, տվյալ դեպքում՝ առավելապես պատմական հիշողության և վարքի նորմերի վերարտադրության համար, երրորդ՝ համայնքը կարողանում է լուծել իր առջև կանգնած թերևս գլխավոր խնդիրը՝ գոյատևումը:

Անհրաժեշտ է առավել մանրամասն ուսումնասիրել համայնքային կյանքի կենսափիլիսոփայությունը, որովհետև կյանքի կազմակերպման այդ մինչքաղաքական ձևը հայերի պարագայում շատ դեպքերում շարունակում է գերակա լինել նաև սեփական ազգային պետության պայմաններում ապրելու ընթացքում, ինչը չի կարող որոշակի խնդիրներ չառաջացնել:

Համայնքը փոքր «մենք»-ի ձևերից մեկն է, որի անդամներն ունեն ընդհանուր էթնիկական ծագում, լեզու, վարքի նորմեր և այլն: Որպեսզի համայնքն ապրի կյանքի մասին սեփական պատկերացումների համաձայն, այն պետք է ունենա **ինքնավարություն**: Պարզ է, որ խոսքը մշակութային ինքնավարության մասին է, որովհետև կյանքի մյուս ոլորտներում՝ տնտեսական, իրավական և քաղաքական, համայնքը չի կարող ունենալ ինքնավարություն, որովհետև բոլոր այդ ոլորտները ենթադրում են ինչպես պետության միջամտություն համայնքի կյանքին, այնպես էլ ակտիվ մասնակցություն պետության ու հասարակության կյանքին և շփումներ համայնքից դուրս գտնվող մարդկանց, կազմակերպությունների և ինստիտուտների հետ: Հետևաբար, համայնքը ձգտում է **մշակութային ինքնավարության**, որի պայմաններում կարող է կազմակերպել իր կյանքը սեփական պատկերացումների հիման վրա, այդ ճանապարհով պահպանել իր մշակութային կողքը, դիմագիծը և չտարբալուծվել օտար խոշոր մշակութային համակարգերի մեջ: Հետևաբար, մշակութային ինքնավարությունը կենսական մեծ նշանա-

¹⁰ **Էդ. Ա. Հարությունյան**, Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը, էջ 6:

կություն ունի համայնքի համար, և այդ ինքնավարության երաշխիքներ ունենալու գինը, որպես կանոն, եղել է էթնիկական համայնքի **քաղաքական չեզոքությունը**: Այսինքն՝ համայնքը հրաժարվել է տվյալ երկրի քաղաքականությանը միջամտելուց, գործող կարգերին քաղաքական գնահատական տալուց, քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցելուց՝ հանուն մշակութային ինքնուրույն կյանք վարելու հնարավորության: Մեր օրերում դրա վառ օրինակն են աշխարհասփյուռ հայ համայնքները, որոնք ունեն եկեղեցիներ, կիրակնօրյա դպրոցներ, մշակութային հաստատություններ և առհասարակ համայնքի ներքին կյանքն ինքնուրույն կազմակերպելու հնարավորություն: Եթե մշակութային ինքնավարությունն անվանենք ռազմավարական խնդիր, ապա քաղաքական չեզոքությունը կդառնա նպատակին հասնելու մարտավարություններից մեկը:

Մյուս յուրահատկությունն այն է, որ ինքնավարությունը, այն էլ միայն մշակութային, անկախության այն առավելագույն աստիճանն է, որին կարող է հավակնել համայնքը օտար մշակույթում: Դրանից բարձր անկախությունն արդեն գտնվում է քաղաքական հավակնությունների ոլորտում և, հասկանալի է՝ դուրս է մշակութային համայնքի հետաքրքրությունների ու կարողությունների շրջանակներից: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ համայնքային «մենք»-ը հակադրվում է արտաքին աշխարհին՝ վերջինիս օժտելով օտարի, թշնամու հատկանիշներով և, հակառակ դրան, ինքն իրեն վերագրելով բացառիկության, եզակիության գծեր: Հետևաբար, համայնքը արտաքին միջավայրը չի դիտարկում որպես ոլորտ, որը ենթակա է նպատակաուղղված փոփոխության, և արտաքին աշխարհում չի իրականացնում քաղաքական ծրագրեր: Փոխարենը՝ շեշտը դրվում է համայնքի ներքին կյանքը կանոնակարգելու, կատարելության ու եզակիության իդեալներին ձգտելու վրա:

Կարևոր հաջորդ արձանագրումն այն է, որ համայնքը լուծում է գոյապահպանման կամ գոյատևման խնդիր: Մշակութային ինքնավարությունը այս տեսանկյունից դառնում է նաև համայնքի գոյությանը շարունակականություն հաղորդող գործոններից մեկը: Բայց ինքնավարությունը վերաբերում է համայնքի ներքին կյանքի կազմակերպմանը, մինչդեռ գոյատևման համար հարկ է կանոնակարգել նաև արտաքին հարաբերությունների ոլորտը: Քանի որ համայնքը չի կարող եական դերակատարում ունենալ արտաքին աշխարհի քաղաքական, տնտեսական և իրավական գործընթացներում, նրան մնում է **հարմարվել** դրանց: Այս դեպքում, եթե գոյապահպանությունն անվանենք ռազմավարական նպատակ, ապա հարմարվողականությունը կդառնա դրան հասնելու հիմնական մարտավարությունը: Ինչպես կենդանական աշխարհում, այնպես էլ սոցիալական կյանքում հարմարվողականությունն ապահովում է համակարգի կենսունակությունը և նպաս-

տում վերարտադրությանը: Սակայն շեշտը դնելով գոյատևման խնդրի լուծման վրա՝ համայնքը միաժամանակ սահմանափակում է իրեն **գարգացման** ծրագիր ունենալու հարցում, որովհետև վերջինս ենթադրում է ոչ թե հարմարվողականություն, այլ ընդլայնման, տարածման հեռանկարներին համապատասխան ակտիվ վերափոխիչ գործունեություն արտաքին աշխարհում, մի բան, որ հիմնականում դուրս է էթնովշակութային համայնքի կենսափիլիսոփայությունից:

Ասվածից կարելի է անել հետևյալ եզրակացությունները: Հայ ժողովուրդը պատմության ընթացքում հիմնականում ապրել է աշխարհագրական տրոհվածության և սեփական ազգային միասնական պետության բացակայության պայմաններում՝ բաժանվելով համայնքների, ինչի հետևանքով էթնոկեցության տիպական հատկանիշներից մեկը դարձել է համայնքային կյանքի մշակույթը: Լինելով հանրային կյանքի կազմակերպման նախաքաղաքական ձև՝ համայնքային մշակույթը, որպես կանոն, չի առաջարկում գարգացման քաղաքական ծրագրեր և սահմանափակվում է արտաքին աշխարհին հարմարվելով, որովհետև հետապնդում է առավելապես գոյատևման խնդիր: Դրանից բացի, համայնքն արտաքին աշխարհից պահանջում է հիմնականում մշակութային ինքնավարություն՝ ներքին կյանքը սեփական պատկերացումների հիման վրա կազմակերպելու հնարավորություն: Ակնհայտ է, որ համայնքային կյանքի մշակույթը պատկանում է կյանքի կազմակերպման նախաքաղաքական ձևերին, երբ սեփական ազգային պետության մեջ հանուն ընդհանուր շահերի ու նպատակների գիտակցաբար և կամովի համախմբվելու հնարավորության բացակայության պայմաններում ժողովուրդը տրոհվում է համայնքների, որոնց համար առաջնային են վերը թվարկված հատկանիշները: Սակայն համայնքային կյանքի մշակույթն այնքան է արմատավորվել հայերի էթնոհոգեբանության մեջ, որ այսօր էլ սեփական ազգային պետության պարագայում շարունակում է լինել կյանքի կազմակերպման գլխավոր ձևը, ինչը չի կարող վտանգավոր հակասություններ և խնդիրներ չառաջացնել: Օրինակ համայնքի սահմանները և պետության սահմանները չեն համընկնում ո՛չ ֆիզիկական առումով, ոչ էլ գիտակցության մեջ, ինչը պետականության պայմաններում դրսևորվում է այն արատավոր երևույթի տեսքով, որ ամբողջովին չի գիտակցվում պետական սահմանի կենսական նշանակությունը, անկախ այն բանից, թե որքան հեռու են մարդիկ ապրում սահմանից: Պետականության պայմաններում համայնքային (ոչ թե ազգային) կյանքի մշակույթի տարածվածության վտանգավոր ևս մեկ, բայց ոչ վերջին դրսևորումն է **քաղաքական անկախության փոխարեն մշակութային ինքնավարության ձգտումը**: Հայոց պատմության մեջ դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է, որը պատերազմ էր հանուն մշակութային (կրոնական) ինքնավարության, բայց ոչ հանուն քաղաքական ազատության: Ընդ որում, հայտնի է, որ Արտաշատի ժո-

ղովը, քննելով Պարսից արքա Հազկերտ Բ-ի առաջարկը, որոշում է նախ հայտարարել, որ հայերը ոչ մի անջատողական նպատակ չունեն և շարունակելու են հավատարիմ մնալ Սասանյան Պարսկաստանին, իսկ կրոնական հարցի վերաբերյալ հայտնել, որ այն կապ չունի քաղաքականության հետ, և մարդիկ ամբողջովին ազատ են ընտրելու իրենց կրոնը¹¹: Հասկանալի է, որ սեփական ազգային պետության պայմաններում էլ համայնքային կյանքի մշակույթով առաջնորդվելը պարունակում է մշակութային ինքնավարությունը քաղաքական անկախությունից վեր դասելու իրական սպանալիք:

МОВСЕС ДЕМИРЧЯН – *Культура общинной жизни в контексте национальной идентичности.* – Современные процессы глобализации ставят перед разными обществами и культурами новые вызовы, поскольку касаются каждодневных отношений людей и изменяют сложившийся веками образ жизни. Когда условия жизни меняются очень медленно - на протяжении жизни десятков поколений, воспроизведение культуры, которая выступает прежде всего как система запретов, способно организовать таким же образом жизнь каждого последующего поколения через унаследованные из прошлого нормы, ценности и идеалы, которые могут существенно не меняться, потому что не меняется социальная среда. Но в современном мире, когда радикальные изменения происходят уже в жизни одного поколения, очевидно, что простое воспроизводство уже не может придать культуре жизнеспособность и продолжительность. В статье показано, что богата и жизнеспособна в первую очередь та культура, которая способна адаптироваться к меняющейся реальности и предлагать альтернативные способы организации жизни. Альтернативными в данном случае являются все механизмы, позволяющие группам людей (нациям, этносам), сохраняя культурную идентичность, проявить себя и найти свое место в меняющейся реальности. Такой опыт приспособления и выживания исторически приобретал в том числе и армянский народ, который, в условиях географической раздробленности и лишенный возможности объединиться в единое национальное государство, был вынужден организовывать свою жизнь посредством автономных культурных общин. Главной задачей последних было в основном выживание, а не развитие, но благодаря этому члены общин приобретали такие качества, как инициативность, гибкость, осознание принадлежности к «своим» (семье, общине), вытекающие из этого нормы нравственности и т. д. Этот богатый опыт армянской культуры является основанием и для того, что в нашем случае национальное государство тоже является рождением культуры, в отличие от многих западных стран, где нация-государство целенаправленно создает и распространяет национальную культуру - общий язык, нормы поведения, нарративы, ценности и т.д.

Ключевые слова: *общность, культурная автономия, адаптация, выживание, культурное принуждение, табу, политический нейтралитет, независимость*

MOVSES DEMIRTSHYAN – *The Culture of Community Life in the Context of National Identity.* – Modern processes of globalization present new challenges for different societies and cultures, as they relate to everyday relationships of people and change the way of life that has developed over the centuries. When living conditions

¹¹ Տե՛ս ԼԷՆ, Հայոց պատմություն. Միջին դարեր, հատոր 2, «Հայաստան» հրատ., Եր., 1967, էջ 64:

change very slowly - over the course of dozens of generations, the reproduction of culture, which acts primarily as a system of prohibitions, is able to organize the life of each subsequent generation in the same way through norms, values and ideals inherited from the past, which may not change significantly, because the social environment hasn't changed. But in the modern world, when radical changes take place already in the life of one generation, it is obvious that simple reproduction can no longer give the culture viability and duration. The article shows that rich and viable, first of all, is the culture that is able to adapt to the changing reality and offer alternative ways of organizing life. Alternative in this case are all mechanisms that allow groups of people (nations, ethnic groups), while maintaining their cultural identity, to express themselves and find their place in a changing reality. This experience of adaptation and survival was also historically acquired by the Armenian people, who, in the conditions of geographical fragmentation and deprived of the opportunity to unite into a single national state, were forced to organize their lives through autonomous cultural communities. The main task of cultural communities was mainly survival, not development, but thanks to this, members of the communities acquired such qualities as initiative, flexibility, awareness of belonging to "we" (family, community). This rich experience of Armenian culture is also the basis for the fact that in this case the culture takes birth to a nation-state, unlike many Western countries, where the nation-state purposefully creates and disseminates national culture - a common language, norms of behavior, narratives, values, etc.

Key words: *community, cultural autonomy, adaptation, survival, cultural coercion, taboo, political neutrality, independence*